



Պ. Վ. ԱՆԷՏԻ ԱՏԵՆԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ  
ՌՈՒՄ ՏՈՒՄԱՅԻ ՄԱՍԻՆ

Կրնայի պարկուրի թէ Տուժան իմ  
գործս ցէ, Տուժանի ընտրող մը չեմ  
ես. նոյն իսկ ուսական հպատակ  
մըն ալ չեմ. սակայն ունինք անգիր-  
ակաւն առած մը՝ որ մինչեւ անգամ  
կատուն ալ կրնայ նայիլ թագաւո-  
րի մը, ու տեսարանը՝ որ Ռուսաս-  
տանը կը ներկայացնէ այս բովան-  
գումը կը քաղաքակրթ ճիւղերէն  
ընչադուրեւեւ կը կարօտի. Գաղա-  
քական կարգերու յեղաշրջումի բո-  
լոր հետաժողովներուն. Ռուսաստանը  
էն հետաքրքրող երկիրն է այս պա-  
հուս երկրագնդի վրայ. որովհետեւ  
մարդկութիւնը կը գիտէ այն փորձը՝  
որ կը կատարուի քանակորոշող դարու  
մէջ բացարձակօրէն հրապարակաւ  
միջոց տալու համար էն բազմաթիւ  
ազգին առաջին անգամը ըլլալով  
ընտրել ներկայացուցիչներ. որոնք  
քանակութեամբ խօսողով, մշտական ու  
գործնական մաս մը պիտի ստանան  
օրէնքներու հաստատման ու պիտեճի  
քննութեան մէջ. ո՛չ մէկ երկրի մէջ  
այս հսկայ փորձը կը գիտուի այն  
քան ջերմ հետաքրքրութիւնով որ  
քան Անգլիոյ եւ Մ. Նահանգացի մէջ.  
Աւելի քան 600 տարի առաջ էր որ  
իմ նախահայրերս արիւնալի ներքին  
կռուի փոթորիկն ու տագնապին մէջ  
լայնօրէն ու խոր կերպով գրին հիմ-  
քերը, որոնց վրայ հաստատուած են  
մեր ներկայ կարգերը. Այսօր Ռու-  
սաստանում կը տեսնենք թէ հիմնա-  
քարը կը գրուի վեհապետին կողմէ  
որ իր օգոստոս Երմանիցիցով կոչ  
կընէ բոլոր բուններուն համար  
ձակցիլ էն մեծ կայսրութիւններէն  
մէկը կառավարելու գործին. Այս ե-  
րեւոյթը, այնքան նորօրինակ, այն  
քան յուսադրիչ այնքան զեղուն  
մեծ հաւանականութիւններով մարդ  
կային ցեղի բարձրին համար. կու-  
սեմնասիրտի բազմազան տեսակէտ  
ներով, ու ես կը համարձակիմ յու-  
սալ թէ շահեկանութենէ զուրկ պի-  
տի չըլլայ. հաւանականօրէն նոյն  
իսկ ոչ ալ զուրկ օգտակարութենէ  
ձեզ համար. բարգաւառ անգլիացիի

ՍԷՍԻԼԻԱ Ս. ՊԼԷՑԻ

16  
**Գ Է Ք Ի**  
Հայկական Ռոման մը  
(Թարգմանութիւն Անգլիերէնէ)  
ԳԼ Ը.  
«ՎԵՐՁԱԼՈ՞ՅՈՒ Է»

— Ո՛ւր է գաղտնի դուռը. Դէֆիս  
Ըսիր թէ ուղղակի բլուրները կը տա  
նէր:  
— Այո՛, բայց դուռը ուրիշ ճամբով  
եկար, պէտք է զէպի ձախ դառնաւ  
Արտուս յուսելու աստիճան կը բա-  
բախէր. Տեղերի՛ն էինք. Սիւլիան  
ի՛նչ ու զգուշութեամբ վար սուա-  
զիս. — Ուրիշ եմ որ գուրբ բոս-  
բաւականին բարձր ու յայն է հուրիս  
հիւրընկալելու համար. իմ Արամա  
բանի հետ ունենալիք կարճ անսակ-  
ցութեան միջոցին, ներսը մնալու  
ւելի ապահով է; Գանի որ բոլորս  
իմասին ներս չենք կրնար մանկ,

մը հայեցակերպը ձերինն հետ  
Ինչ ուրեմն կը խորհին անգ-  
լիացիք Տուժանի մասին նախ քան  
ատոր պատասխանելը, անոնք հարց  
կը դնեն թէ կայսերական ուղարկու-  
յառաջուած այդ յատակագիծը կրն  
գունուի՞ իր ներկայիս իրրեւ վերջ-  
նական լուծում մը հարցին. Եթէ  
գա գրուած ըլլար արդէ վերջնական  
խօսք մը խնդրին նկատմամբ, ան  
չուշտ. անոնք պիտի քննադատէին  
զայն շատ տարբեր եղանակով քան  
այն ինչ որ ներկայացուած է իրրեւ  
փորձի քայլ մը վայրի մը մէջ՝ որ  
անպիղծ մնացած դրեթէ ուսներէն.  
Բարեբաղդաբար մանիֆէստն վճա-  
կան պատասխան մը կուտայ հարցին.  
Տուժանք որքանակօրէն մէջ պաշտօնա-  
պէս յայտարարուած է իրրեւ ոչ վերջ  
նական Աւելի բարեփոխումը յստա-  
կօրէն ցոյց տրուած է այն յօդու-  
ածին մէջ՝ ուր խօսք կընէ առաւել  
վերայվածներ իր հիմքին համաձայն  
ժամանակի պահանջին ու կայսրու-  
թեան բարօրութեան. Ըլլալով սա-  
խափորը կընդունինք Տուժանի որպէս  
խիստ շահեկան ու խոստովից նա-  
խափոր մը փորձառական քաղաքա-  
գիտութեան դաստիարակ. Վերջնա-  
կան չէր Սիւլիան արտաթիւն մըն  
է նախաքայլ մը ու իմ կարծիքովս  
խիստ յանդուգն յատկաբար յայտարար  
զէպի ներկայացուցիչը ընտրական  
հաստատութեան մը, որ ժամանա-  
կին կատարելագոյն պիտի հասնու-  
տասխանէ պէտքերն ու եւ ակնկալու-  
թեանց բովանդակ ուս ազգութեանն  
Ինչ է նախաքայլը. Ստեղծումը  
չէր զա ընտրելու օգտագործիչ մարմնի  
հրոզարտակով (չարքըր) մը. ազատ-  
օրէն շնորհուած վեհապետէն, արտօ-  
նելով զայն ազատօրէն վիճել ամէն  
առաջադրուած օրէնք՝ մերժելու կամ  
ընդունելու համար, ազատօրէն հարց  
ու փորձելու, քննադատելու կամ  
պարտաւելու ունի փոխարտի ա-  
րարք եւ ազատօրէն ձեռք գարնելու  
ֆինանսական բովանդակ հարցին.  
Այս անուշա հսկայ քայլ մըն է  
առնուած կառավարութեան կող-  
մէն. 500է բազմացած այս ընտ-

կարծես ներդաւան կը գտնուիս ինձ,  
նախ ձիւ մտցնել չեմ գիտեր թէ...  
Մէկէն ի մէկ կանգ առաւ. Չայնին  
մէջ յուզուած շեշտ մը կար. որ իմ  
սրտուս ալ արձագանգ գտաւ. Ինչ  
ու է ի վախճալու.  
Սիւլիանան հարկի ձեռքը դրան  
վրայ դրած էր՝ երբ յանկարծ ետ  
քաշեց. — Ո՛չ, գոչեց. քեզ մինակ պի-  
տի չը թողու՛մ. Թո՛ղ չուրին. վը-  
տանգի ենթակուի. առանց քեզի չը  
պիտի երթամ. Սանձը քակեց, ծառի  
մը կապեց զեղեցիկ երիվայրը. շո-  
յեց զայն. քանի մը բառեր փոփոց  
ակնջին ու ապա ինչէս բռնելով.  
Դէֆիս, ըսաւ, այնպէս մէջ միայն  
մէկ հոգի մը կայ. որ չուրիէս աւելի  
կը սիրեմ. Կրնա՞ս կռահել.՝ Երեսը  
նայեցա՞ս ու պատասխանը աչքերուս  
մէջ կայրդայ.  
Դրան մտեցանք. Սիւլիանն հրեց  
զայն. Առանց աղմուկի, զիւրու-  
թեամբ մը բացուեցաւ Այդպիսի դի-  
րութեամբ բացուելէ առաջ՝ իւրտե-  
լու համար ծանր աշխատանք վատ-  
նուած ըլլալու էր. ներս մտանք.  
Չո՛ն, արահետին մէջտեղը, լուսնին  
լոյսը ամբողջովին իր խոյր առնա-  
կան կազմին ու կոշտ ստփոտ դէմքին

րեւոյ մարմինը ոչ միայն պիտի հաս-  
տատուի կայսրութեան սրտի վրայ  
կայսերական եւ ազգային հրամանով  
մը՝ նկատելով ինքզինքը որպէս տէր  
ուս ժողովուրդի բացարձակ դատաս-  
տանին. այլ եւ աւելցուած է որ իր  
վէճերուն տեղեկագիրները պիտի հր-  
րատարակուին. այնպէս որ բովան-  
գակ Ռուսաստանն ալ լսէ ինչ որ ըս-  
ուած է. Այսպիսի հսկայ, այսպիսի  
վիթխարի նոր իրականութեան մը  
նկարագրութեան. կը խոստովանիմ  
թէ շարակամ ու անհամբոյր է հար-  
ցին բծախնդիր մանրամասնութիւն-  
ները փնտաել.  
Տուժանի քննադատները կը գան-  
գատին. նախ եւ առաջ իր կազմու-  
թեան եւ ապա իր միջոցներուն սահ-  
մանափակման մասին. համարձակ-  
րէն կարելի է համակերպել որ կազ-  
մութիւնը գաղափարական չլ. առէք.  
օրինակի համար, սուսին առարկու-  
թիւնը՝ թէ ընտրութիւնը սահմանա-  
փակ է ու անուղղակի: Փոխան ընդ-  
հանուր քննարկութեան, ունիք օփ-  
մը անձնաշնորհուած ընկերները քա-  
ղաքները. եւ փոխան ուղղակի ընդ-  
րութեան, Տուժանի անգամները պի-  
տի ընտրուին ընտրական ժողովներէ  
բազմազան ընտրուելու անմիջական  
ներկայացուցիչներու կողմէ. Ընդու-  
նելով հարգելով իրաւացիութիւնը  
սոյն առարկութեան կարելի է ցոյց  
տալ որ նոյն Անգլիոյ մէջ տակաւին  
ընդհանուր քննարկութիւնը հաստատ-  
ուած չէ, եւ նոյն իսկ Ամերիկայի  
Մ. Նահանգացի մէջ, շատ քիչ բացա-  
ռութիւններով, քննարկութեան գրե-  
թէ կէտը զուրկ է իրաւունքէ՝ լոկ  
սեռի համար. Բայց տո՛ւք. թէպէտ  
եւ կը տկարացնեն արդարութիւնն  
ու կատարելութիւնը անգլիական կամ  
ամերիկեան կարգերու. չեն կործա-  
նիր անոնց արժանիքն ու ազգեցու-  
թիւնը. Ոլորտայտոյտ ու սուրբինի  
անցքերու մէջէն, ազգին կամքը չը  
թերանար բարձրանալ. Մեր բարյա  
մէջնոյն ու մեր զօնիրէք կարող են ո-  
րոշ ու լսելի ձայն տալ այն հաս-  
տակութեան համոզումներուն՝ որն ի-  
րենք կը ներկայացնեն. Գա է էս

վրայ իջած. կանգնած էր Գրոգօն...  
ԳԼ Թ.  
**ՍԷՍԻԼԻԱՆ ԻՐ ՎԱՐՁԱՍՊՈՒԹԻՒՆԸ**  
Կ Ը Պ Ա Շ Ա Ն Ջ Է  
Ետ ընկերկելով՝ զիս բռնող բու-  
զուկներուն փառեցաւ. Թեթեւ սեղ  
մում մը ապահովուց զիս «Մի՛  
վախնար», փոփոց սէրը ակահինս.  
Գրոգօ խոնարհութիւն մը ընելով  
յառաջ եկաւ ու պահ մը տըքերը վրաս  
յառեցան. կը բղջաճառէին անոնք.  
Սարսաղի ու հնար եղածին չափ զիս  
պահպանող բազուկներուն աւելի յա-  
րեցայ.  
— Ո՛վ մեծազնիւ փաշա ըսաւ ան,  
Գրոգօն ձեր ոտքերը կը համբուրէ.  
Դու ծառայ. իմաստուն Արամաբանը  
զրկած է զիս իր դուստրը իրեն տա-  
նելու, և խնդրած է, ո՛վ ամենազոր-  
մած թիւրքը շնորհակալութիւն յայտ-  
նել քու էնոր մատուցած պաշտպա-  
նութեանդ համար. Ու ձեռքս բռնեց.  
— Վերցո՛ւր ձեռքդ, ստորուկ, գո-  
չեց Սիւլիանն. Ե՛ս, միմիայն ես  
պիտի տանիմ Արամաբանի դուստրը

կան կէտը. — հասարակաց ժողով մը  
մը պարունակելով մարդիկ երկրի  
ամէն կողմերէն, օրինաւորապէս նը-  
ւերուած՝ սրտայայտելու համար ա-  
զատօրէն ու հրապարակաւ ազգին  
գաղափարները.  
Չիմա կուգամ տուժանի հիշիւնա-  
կութեան սահմանափակման. այս  
սահմանափակումներուն վրայ շտալ  
ուած քննադատութեանց մեծամաս-  
նութիւնը. ինձ կը թուի, աւելի-  
մեղօրէն քննելու համար խօսքս՝ ան-  
տրամաբանական փոփոխութիւնը սո-  
հասարակ փողոց չեն նետեր իրենց  
նորածին մանկիկները որովհետեւ ա-  
նոնք ոչ կը քալեն. ոչ կը խօսին.  
ոչ կը կարգան. ոչ կը գրեն. Անոնց  
հարցը սա է. «Մանուկը կեանք ու-  
նի՞ իր մէջ. եթէ կապի պիտի մեծ-  
նայ. Եւ ինչպէս որ մանկանց հետ է  
նոյնն է եւ Տուժանին. «Կեանք ու-  
նի՞ իր մէջ. եթէ այո, պիտի դար-  
գանայ. Որ նա կեանք ունի իր մէջ՝  
դա որոշ է. որովհետեւ ատոր մէջ  
պիտի գտնուի մարմնացու մը Ռուսաս-  
տանի ժողովրդին կենդանի հոգոյն.  
Արքան ալ թոյլ, որքան ալ երկչոտ  
ըլլան նորածին Տուժանին առաջին  
չալուսները. իր սիրտը պիտի բա-  
բախէ պատասխանատու ձեռք հսկայ  
ազգութեան բազմաթիւն ու իր ու-  
ղեղին մէջ պիտի սուզուին այն մտա-  
ձուները, ակնկալութիւնները. ո-  
րոնք կը յուզեն 130 միլիոն կենդա-  
նի հոգիներն.  
Սակայն այս բոլորէն վերջ. սահ-  
մանափակումները, մանկիկ Տուժա-  
նի այս խանձարուր փաթակները,  
այնքան խիստ են. Առարկութիւն-  
ներուն մեծամասնութիւնը հիմնուած  
են, ինձ կը թուի, անկատար ծա-  
նօթութեան վրայ ուրիշ երկրի ներ-  
կայացուցիչ մարմիններու սահմանա-  
փակումներուն. Առէք, օրինակի  
համար, հասարակութիւնը պիտի  
մասնակցիլ ընելու հարցը. անգլիա-  
կան տեսակէտով մը, սա անհարկի  
նախազգուշութիւն մըն է հանդէպ  
երեւակայական վտանգի մը. սակայն  
տարօրինակ ու անսովոր բան լրկայ  
օտարնիւն վտարման մէջ. Անգլիա-

կան բարձրագույն մէջ մինչեւ օրս  
այ օտարներ իրաւունք չունին ներ-  
կայ գտնուելու . Տուժայի նախա-  
գահը իրաւունք ունի արտօնելու մա-  
նու ի ներկայացուցիչներուն . եւ . ու-  
նենալով իրաւունք գտնուել վտա-  
րելու վրայ չը պիտի երագէ իսկ .  
եթէ ընէ , ըննադատական քուէ մը  
Տուժայի կողմէ՛ գայն անմիջապէս  
խնդրի պիտի բերէ . Ազատութիւն ու  
ամբողջութիւն բարձրանողական տե-  
ղեկացորներու՝ առհասարակ աւելի  
ըզձայի է անդա՛ երուն քան թեր  
թերուն .

Կը՛ այ հիմնական առարկութեւ-  
նը՝ թէ՛ Տուժան բարձրագոյն Օրէնս-  
դիր մը չէ՛ օրէնքներ անցնելու հա-  
մար համաձայն իր կամքին . Ուրիշ  
խօսքով , առարկողները կը գաղա-  
տին թէ՛ կայսրը քաղաքական հարի-  
քարի մը չէ՛ գործած , ճարտական ե-  
զանակով , և մերժած է գործ դնել իր  
ինքնակալական ոյժը՝ վերջ գնելու  
համար ինքնակալութեան Այս գաղ-  
գատը արամարանական կը թուի ա-  
նոնց՝ որոնք կերեւակային թէ՛ 130  
միլիոն ռուս հպատակները , 140 սզ  
գուժիւններով , որոնք կրնողունին  
կայսեր կանոնը Եւրոպայի և Ասիոյ  
մէջ , որոնց երկու-երրորդը ոչ կրնայ  
կարգաւ և ոչ գրել և որոնց երեւոյ-  
չորրորդը չի գիտեր ինչ կը նշանակէ  
հանրապետութիւն , հասուն են ամե-  
նակերպին ռամկավարական յեղաշր-  
ջումի կազմութեան որոգորութիւն .  
Բայց սա անհնարին է անգլիոյ ցիւրի մը  
համար , որ այս րոպէիս չընդունիր իր  
հպատակակից ասիացին նոյն իսկ  
խորհրդական ձայնի կայսերական  
բարձրանողին մէջ մասնակցելու սոյն  
գանգատին : Ժողովրդային կարծիքը՝  
որ խորհրդաժողով մը ուղղակիօլն  
ներկայացուած ժողովրդէն՝ պէտք է  
յաջորդէ րովանդակ լիազօրութեան  
ինքնակալ ոյժի : գոյութիւն չունի  
անընթացական կամ ամբողջական պատ-  
մուտեան մէջ : Միտցեալ նահանգ-  
ներում . գրեւոր Սամաւագրու-  
թիւնը , քաջուած ստուելի քան 100  
տարի առաջ , աւելի ձուլուածոյ մըն  
է իր հեղինակաւորութեան մէջ՝ քան  
ո և է ինքնակալի կամքը . Բովանդակ  
Ամերիկեան ազգութիւնը կրնայ ընտ-

րել ներկայացուցչական ժողով մը ,  
Ներակոյտ մը և նախագահ մը բո-  
լորն այ միահամուռ որոշած անցնե-  
լու համար մասնաւոր օրէնք մը : Սա  
կայն բոլոր ընտրական ոյժերու միա-  
ձայնութիւնը անգոր է՝ երբ Մ . Ն .  
Բարձրագոյն Ատենար կը հռչակէ  
այսպիսի օրէնք մը հակառակ Սահ-  
մանագրութեան . Մեծն Բրիտանիոյ  
մէջ Հասարակաց Խորհուրդը (Հասու-  
ով բօմբն) , որ գալ՝ տարի չափա-  
զանցօրէն Ազատական պիտի ըլլայ ,  
ինքզինքը գիտադրուած պիտի գտնէ  
Կորսերու Խորհրդէն , որ միշտ ջերմ  
Պահպանողական է .

Հիմա պիտի նմանցնեմ ազգային  
ներկայացուցիչ Համագումարը իժոյզի  
մը որ կը կրէ իր վրայ արքայական  
մարտիկը յաղթական՝ թշնամեաց  
չարքերուն մէջէն . վտան եմ թէ  
Տուժան այ այսպիսի ժողով մը պիտի  
ըլլայ :

Բոլոր ժողովրդային ընտրուեալ  
առաջին պայմանն է՝ որ ընտրողները  
ազատ ըլլան իրար գալու և լսելու  
կարծիքները քանտիտաքննելու և  
վիճելու այսպիսի ժողովներու մէջ  
տրուած հարցերը : Օրէնքը , ուրիշն ,  
պէտք է պարզօրէն արտայայտուած  
պայմանագրութիւններով արտօնէ հը-  
րապարակաւ կամ անանին գումա-  
րութեանը ազատութիւնը : Ապա թէ  
ոչ ընտրութեան ազատութիւն կա-  
րելի չէ՛ և ուրիշն կարելի չէ նստել  
իրական Տուժա : Սա առաջին ոտքն է  
Տուժա նժոյզին : Բայց ամեն մարդ  
կարող չէ երթալ գումարութեան :  
Վաղաքական ու ընտրական հարցե-  
րու տեղեկութիւնները ժողովրդի մե-  
ծամասնութեան պէտք է գտնու-  
մուլի միջոցաւ : Ուստի , քանի որ  
հարկաւոր է մամուլի օրէնքին ներ-  
քեւ լինելը , նոյնպէս կատարեալպէս  
էական է անոր ազատութիւնը : Եթէ  
լրագիրներ օրիգանց գտնուին , թո՛ղ  
պատժուին համաձայն օրէնքին ար-  
դար դատաստանէ վերջ , Իբրև հը-  
րապարակագիր մը անձնապէս . կա-  
տարեալպէս անհասկնալի է ինձ՝ թէ  
ինչո՞ւ լրագիրները կենթադրուին ,  
որոնք պէտք է կայսեր աչքերն ու

ականջները ըլլան , ոստիկանութեան  
միահեծան քունթօյլին , որ կրնայ  
ուղղակի շահ մը ունենալ . արգիւտու  
ճշմարտութիւնը գահին հասնելու :

Թարգ . Անգլ . Օրաթերթ  
«ՏԵՅԼԻ ԲՐՕՆԻՔԼԵՆ»  
(Եւրոպական)

Ո՛Ր ԵՆ ՀԱՅ ԻՐ ԴՅՆՆԵՐԸ

Թիֆլիզ , 19 սպտեմբերի

Ընդունուած ճշմարտութիւն է ,  
որ երբ մի որ և է օրգանիզմի ,  
մի որ և է հասարակութեան վը-  
տանք է սպառնում , նրա բոլոր  
մարմինն էլ պէտք է ջան ու ճիգ  
թափեն այդ վտանգը հեռացնե-  
լու և գրանով իրանց գոյութիւնն  
ապահովելու :

Սակայն ի՞նչ ենք մենք տես-  
նում մեր—հայկական կեանքում .  
Գաւառից գաւառ , նահանգից  
նահանգ հոսում է արիւնը , լրս-  
ում են օգնութեան կոչերն ու  
աղերսներն , բայց մենք մի  
այն կաթիլ կաթիլ օգնութիւն  
ենք հասցնում :

Հայի հայրենիքը դժոխք է  
գարձել . իրականութիւնը—ար-  
իւնտա հրգեհ և պէտք էր սպա-  
սել , որ հայ ժողովրդի բոլոր  
դասակարգերը , բոլոր զաւակ-  
ները վրայ կը հասնեն այդ հր-  
գեհը հանգցնելու համար :

Գրողն իր գրչով , հարուստն  
իր փողով , զինուորն իր զէնքով ,  
բժիշկն իր գեղով , իրաւաբանն  
իր պաշտպանութեամբ , պէտք  
է ապարէզ մտնէին ընդհանուր ,  
համազգային աղէտը թեթեւաց-  
նելու համար :

Բայց ի՞նչ...

Քչերը , շատ քչերն են իրանց  
այդ պարտականութիւնը կատա-  
րում . շատերը միայն խօսում են ,

յուզում , պլատոնական կարեկ-  
ցութիւնն արտայայտում և ապա  
նորից շարունակում իրանց սո-  
վորական կենցաղը .

Իսկ այնտեղ—հայի հայրենի-  
քում սեւ , բարբարոս ու մը շա-  
րունակում է իր քաղաքործու-  
թիւնները , կեանքից գրկելով  
հարիւրաւոր ու հազարաւոր հա-  
յերի , աւերակ ու մոխիր գարձ-  
նելով նրանց տունն ու օճախը :

Եւ վերաւոր հայր այդ ար-  
իւնտա մոխրակոյտերի շուրջը  
խմբուած նորից օգնութիւն է  
խնդրում իր հեռա որ եղբայր-  
ներից :

Նամակ նամակի , հեռագիր հե-  
ռագրի յետեւիք թիֆլիցներ են  
հրաւիրում գէպի նախընտան ու  
Ձանգէզուր :

Բայց գնացող չը կայ . Ասա՛յ .  
նորգարունի նպատամատոյց  
յանձնածոյովը այդ մասին յայ-  
տարարութիւններ է տպում տե-  
ղական բոլոր թերթերում . ամ  
սական երեք հարիւր ռուբ-  
լի պատկառելի ոտնիկ է նշանա-  
կում : Դարձեալ ոչ մի արձագանք  
հայ բժիշկների կողմից , 1—2  
ռուս բժիշկներ ցանկութիւն են  
յայտնել գնալու , իսկ հայերից  
և ոչ մէկը :

Ահա հայի գառն իրականու-  
թիւնը . Հայ բժիշկը տեղից չի  
չարժուում , որովհետեւ «այնտեղ  
վտանգաւոր է , այնտեղ սեւ մահն  
ն թափառում : Ի՞նչպէս և ին-  
չո՞ւ գնալ , երբ կարելի է ճա-  
տերով էլ . դատարկ խօսքերով  
էլ կարեկցութիւն յայտնել , գա-  
ղափարական մարդ ձեւանալ...

Ձեռ գնում , Բայց մտածո՛ւմ են  
արգեօք , թէ այդպիսի վարմուն-  
քով ի՞նչ արատ են հասցնում ի-  
րանց հոշմանը , ի՞նչպիսի ամօ-

— Հայր իմ , գոչեցի :

— Զաւակս—Դէֆիս , միակ աւանդս  
որ մնացած ես այն սիրուն հրեշտա-  
կէն—մօրմէ՛դ , պատասխանեց ան :

Առաջին անգամն է որ այդ նուի-  
րական անունը կարտասանէր ան իմ  
ներկայութեանս : Ապա , տակաւին  
զիս իր թեւերուն մէջ գրկած , վեր  
նայելով՝ ըսաւ—«Շնորհակալութիւն  
և փա՛ռք քեզի , ո՛վ իմ հայրերուս  
Աստուածը , որ չի մոռցար ողորմած  
ըլլալ . ո՛վ սիրուածներուն և կոր-  
սուածներուն Աստուածը որ կրկին  
չնորհեց իր ինձ այս չքնաղ ծաղիկը՝  
ալեւոր տարիներս գուարթացնելու  
և մխթարելու համար թո՛ղ նախա-  
հայրերուդ Աստուածը օրհնէ քեզ ո՛վ  
Դէֆիս :

Ապա համբուրեց զիս , քովը նստե-  
ցուց և Սիւլէյմանիս նշան բրաւ

Իսաական հեռուն կանգնած էր ան  
մեծ սրահին մէջ , և թէեւ ըստ երեւ-  
ւոյթին գրպանէն բան մը հանելու  
գրադուած կերեւէր , սակայն , այդ՝  
իրապէս ակնատես չըլլալու համար  
էր այսպիսի հանգրպումի մը—հօր և  
զաւակին միջեւ այսպիսի գրկնդխառ-  
նումի մը : Հիմա հօրս մօտեցաւ ,  
ձեռքը ունենալով փոքր ինչ կարե-

ւոր թուղթ մագաղաթ մը :

Գետին խոնարհեցաւ , սակայն ,  
հայրս վերցնելով կրկեց զինքը «Ո՛վ  
Սիւլէյման մագրոց է՛ն աչնիւն ու  
ողորմածը , Միքէլ պատմեց այն բո-  
լոր ասպետական անձնուիրութիւնն  
ու խնամքը , որով հակեցիր ու հողա-  
ցիր Դէֆիս : Եւ ինչպէս կը խօսէր .  
ձեռքը գլխուս վրայ դրաւ . ո՛վ իսկ  
աւանդն է որ մնացած է ինձ իր հը-  
րեշտականման մօրմէն» : (Դարձեալ  
այդ սրբազան անունը , Հայրս այնուս  
պիտի խօսի ինձ այդ մասին , կը խոր-  
հէի) . Եթէ Աստուած իր անհուն  
բարութեամբ չը զրկէր քեզ զէնի  
փրկելու գուցէ՛—ո՛հ Աստուած իմ ,  
կը սուկամ մտաբերելու—գայլերէն  
յօջօտուելէ աւելի գառն ձակատագրի  
մը մատուցի :

—Ա...ր... ը... Սիւլէյման ,  
մեղմօրէն ու արմուտեամբ խի՛տ  
զարհուրելի է , Բայց վտարեց այդ-  
պիսի խորհուրդներ իրբեւ ահալի  
մզմաւանջներ :

—Սակայն երբեմն իրականութիւն  
ներ են ատոնք , ընդմիջեցի րոպէա-  
կան արագութեամբ : Այս գիշերան  
պատահարը , Սիւլէյման , ահաւոր  
իրողութիւն մըն է :

Ընդմիջուած ցաւալի եղաւ : Հայրս  
բացատրութիւն պահանջող ակնարկ  
ներ ուղղեց

—Ո՛վ Արամարան , ինչ որ աղբիկ  
կրտէ , շատ ճշմարիտ է : Դժոխակ ի-  
րականութիւն մըն էր այդ . կը յու-  
սայի թէ՛ . հօր տունը գալոր պիտի  
հեռացնէր գայն իր մտքէն : Ձէյրու-  
թիւնը րոցելու մէջ է...

Ձէյրութիւնը րոցերո՛ւ մէջ . գոչեց  
հայրս , րոցերո՛ւ մէջ . եւ յուզմուն-  
քէն սկսաւ սենեակին մէջ քայլափո-  
խել մէկ երկու րոպէ . ապա յան-  
կարծ կանգ առաւ .— Դիւահարները  
դժոխային գործուէն թեան մէջ են  
կրկին : Ո՛հ , Սիւլէյմանս գոչեց  
գրգռուած , եթէ յանկարծակի այս  
երեկոյ ըու եւ Դէֆիս վրայ յարձա-  
կէին , ողջ անունը ձեռք չէիր յանձ-  
ներ զէնի , այնպէս չէ՛ :

—Ո՛ղջ անունը ձեռքը . հազար  
մահ նախ , գոչեց Սիւլէյման խորի-  
տաբար .—Դուն չես գիտեր զիս . ա-  
րամարան : Այս ,— եւ ձեռքը գոտի-  
ին մէջ խրուած հոշակապ դաշոյնին  
վրայ դրաւ .—պիտի խմէր էնոր ար-  
իւնը նախ եւ առաջ . գէթ միասին  
մեռնելու երջանկութիւնը կը վայե-  
լէինք :

Սիւլէյման ինձ նայեցաւ . խիստ  
տագունած էր : Ես , թէեւ անխոզ  
սակայն կը զողոյջէի , Սիւլէյմանին  
հետ մեռնիր հազարապատիկ լաւա-  
գոյն էր քան առանց անոր ապրիլը :

—Բաւական է , Սիւլէյմանս , բա-  
ւական է . Բարեխաւարար պէտքը  
չըզգացուեցաւ . եթէ ըլլար , ես ալ  
ճիշդ եւ ճիշդ միեւնոյն ձեւով պի-  
տի վարուէի : Ո՛հ , ի՛նչ դրութեան  
հասեր է մեր տարաբախտ Հայաստա-  
նը , որ հայրերը իրենց գեղանի զաւ-  
կներուն համար այսպիսի հաւանա  
կանութիւններ մտածեն... Եւ հիմա ,  
քեզ որքան շնորհակալ ըլլալու եմ ,  
զթատիրտ եւ վեհօգի Սիւլէյման ,  
Դէֆիս իր հօր տունը , հօր գերկը  
բերելուդ համար :

Սիւլէյման ժպտեցաւ , այն հազ-  
ուագիւտ ժպտներէն մէկը՝ որ կը  
սիրէի տեսնել .—Ինչո՞ւ չնորհակա-  
լութեան մասին կը խօսիս , Արամա-  
րան : Դէֆիսի րնկերակցութիւնը ,  
իմ էնոր րնկու պատեւն ունեցած ո  
եւ է չնչին ծառայութեանս հարիւ-  
րապատիկ անգամը փոխարինեց ինձ :



Թանք են պատճառում ամբողջ հայ իստեղիգեներին :

Թիֆլիզում, կովկասի մասեր կենդանու համարույ այս քաղաքում մենք ունենք բազմաթիւ հայ բժիշկներ. հայի անուրից, արիւնտ ցաւերից խօսող բժիշկներ :

Բայց ո՞ր են այժմ .  
Հիւանդ, վիրաւոր նախնիքանցին ու զանգեզուրցին բժիշկ են ուզում—իրանց լիզուն, իրանց դարձը հասկացող հայ բժիշկներ :  
Ո՞ր են. թո՛ղ առաջ գան, քանի ուշ չէ :

«ԱՐՇԱՆՈՅ»

### Կ Ո Վ Կ Ա Ս

#### Ա Ր Ի Ի Ն Ո Տ Է Ջ Ե Ր Ի Ծ

Երէկ Կրկնայ ԵՐԵՒԱՆԻՑ մեր յատուկ թղթակցից ստացաւք հետեւեալ հեռագիրը .

Երևան, 19 սեպտ. ժամը 10,40 ցեր .

Երէկ, ճաշից յետոյ սկսեց հրացանաձգութիւն. որ իսկոյն գագարեցրին քաղաքի բոլոր մասերում երևացող զօրքերը, գըլուխ ունենալով իշխան նապօլէօնին : Հրացանաձգութիւնն սկսելու պատճառները պարզուած չեն : Երկու կողմից վիրաւորներ չեն սպանուածներ թիւը մօտ 18 է հայերից սպանուած են—2, վիրաւորուած—3 : Այսօր խաղաղ է, շուկան փակուած է. քաղաքում պահակներ են գրուած : Իշխան նապօլէօնը խիստ սաստեց ազգաբնակչութեանը :

Կովկասի ոստիկանական մասի կառավարիչ Երրինկինի զիւանտանը ստացուել են հետեւեալ պաշտօնական հեռագիրները .

Ա .

ԳԱՆՁԱԿ. Քաղաքում տեղեկութիւններ են ստացուած, որ վեց գիւղերի թուրքերը մեծ խմբերով հաւաքուած են՝ յարձակուելու համար հայ գիւղերի վրայ : Ստացուած են նոյնպէս լուրեր որ 33 հայ են սպանել Վ. գարու՛մ : Զիւանդիրի գաւառում գտնուել են հինգ զինած ուսմբեր : Երկրից խնդրում են զօրք ուղարկել :

Բ .

Ի լրացումն հեռագրի լուր տուածին, որ Բաթումում հայերին պատկանող գործարաններում ուսմբեր են գտնուել, հաղորդում ենք, որ գտնուել է 15 ուսմբատնուել են նոյնպէս ուսմբը զինելու պարագաներ—գիւն. միտ, կապսիւլներ և բացի դրանից, մօտ 7 փութ փամփուշտ :

Գ .

ԳԱՆՁԱԿ. Սեպտեմբերի 6 ին 9 թուրք ձրաւորներ Սղնախի Իլ գիր գիւղից՝ յարձակուեցին

Չազլիկ (Գանձ. նահանգ) գիւղի հովիտների վրայ : Տեղի ունեցաւ հրացանաձգութիւն, օգնութեան համար համագիւղացիների և թուրքերի միջև : Աւազակներից 2 հոգի սպանուեցին և 2 հոգի վիրաւորուեցին : Հրացանաձգութիւնից յետոյ՝ յարձակուողները փախան : Անշուշտ արիւնհեղութիւն պիտի յառաջանար, որով հետեւ մօտ 200 թուրք հաւաքուեց. սակայն իր ժամանակին հասնող պահակները դէմն առան : Գ .

ՆՈՒՍՈՒՄ վախենում են թէ խռովութիւններ պիտի սկսուեն և դրա համար էլ նահանգական վարչութեանը խնդիր է ուղարկած՝ զօրք հասցնելու :

ԱՎԳՈՒ. Սեպտ. 16 ին, ժամը 5 րեկոյն 5 ին, Բանդերեան գնդի զինուորները բռնեցին մի անյայտ մարդ՝ ձեռքը զինած ուսմբով : Այդ իսկ միջոցին մի հայ՝ վիրաւորեց մի թուրքի, բայց կողակները բռնեցին նրան : Կողակների վրայ գնդակ արձակեց գառատական մի հայ պրիստա, որը ձերբակալուած է : 17 ին քաղաքում և հանքերում հանգստութիւն է :

ԱՍԻՖԵՆԻ աւանից մեր թղթակցը գրում է .

Ամսոյս 7 ին եօթը զինուած թուրքեր յարձակուելով Զամիւլ լու հայ գիւղի վրայ (7 տու է) քշում տանում են 25 գլուխ եղջիւրաւոր անասուն և հրացանազարկ անում նոյն գիւղացի Անդրէաս Հայրապետեանցին : Երկու շաբաթուած ամեն տեղ էլ թուրքերը ընդհարում են հայերի հետ և թալանում կողոպտում են ինչ որ կարողանում են :

Երկու շաբաթուած հանրականքով գնացող 7 հայերը, որոնցից 4ը կանայք՝ բռնուել են թուրքերից : Ազգամի և Ղարբանդ կայարանների շրջանում Այսպիսով, թէև ճանապարհներին Երկու շաբաթ մինչև Եւլախ կայարան տեղ տեղափոխ է կանգնեցրած, բայց և այնպէս ճանապարհորդութիւնը դարձել է դժուարին և վտանգաւոր : Ազգամի և Ղարբանդի շրջանում թուրքերը յարձակուել են պոստի վրայ՝ կողոպտելու, բայց այդ նրանց չի յաջողուել. տարել են միայն մի կապոց : Երկու գնեցրալ նա. հանգապետը գնաց ճանապարհը բանալու և անհետացած 7 հայերին որոնելու, որոնք, ինչպէս ասում են, մաս մաս յօշոտուած են :

ԵՈՒՇՈՒՑ ստացաւք հետեւեալ հեռագիրը. 19 սեպտեմբերի 5 ժ. 15 րեկոյն .

Երկու ազգային զոհերին՝ վրտանգուած, փնտսուած հայերին օժանդակող կօմիտէն, կրկին օգնութիւն է կոչում կարեկից

մարդկանց : Մի քանի հազար կանայք, երեխաներ մնացել են անտուն, առանց ունենալու եղած կանխիկ իջոցները չնչին են, սպառում են : Սարսափելի թանգութիւն է : Առաջիկայ ձմեռը գաւառներում շքաւորութեան հասած լուսապետներին տալիք օգնութիւնը բարդացնում է մեր գործը :

Մասնաժողովի նախագահ՝ ԱՇՈՏ ԵՊԻՍՈՊՈՍ

ԳԱՆՁԱԿԻՑ մեր թղթակցը գրում է .

Ամսոյս 14 ին խաչկապ գիւղից լուր հասաւ մեզ. թէ աւազակի անուան տակ գործող թուրքերը քշել են խաչկապցիների տաւարն ու ձիաները : Սարու Եւլ կոչուած տեղը հանգիպում են Չովդա գիւղի պահապաններին, որոնք առանց աւազակների հետ ընդհարում ունենալու խլում են անասունները և յետ քշում . . .

Ինչպէս լսում ենք գին. Տակայլիին ա, գելել է քաղաքում զէնք ման ածելու . . .

(Պետերը. հեռագր. գործ)

ԱՎԳՈՒ, (Սեպտ. 17 ին) Քաղաքի դրութիւնը, որ խաղաղ էր, արագ կերպով վատթարացաւ : Երէկ վիրաւորուել է մի հայ, այսօր հիւանդանոց են բերուած երկու վիրաւոր թուրքեր :

ԱՍԻՖԵՆ, (18 սեպտ.) Ոստիկանութիւնը շրջապատելով մի քանի գործարաններ նախաշինքաղաքում, յայտնագործեց շատ հրացաններ և ուղիւմ թուրքեր :

Գանձակից մեզ գրում են սեպտ. 16-ին 3 օր առաջ կորեկի հնձատեղից Գեօրանից Գեօրաչէն վերագործող հինգ հայ գիւղացիների վրայ յարձակուած են զինուած թուրքերը և, խլելով հայերից սրանց գաշոյնները, սրախողխող տնում, մարմինները ալլանդակում և միմեանց վրայ կուտակելով, շարագործները չքանում են : Այս անխիղճ սպանութիւնը շատ վատ է ազդել և մեծ յուզմունք է առաջացրել Գանձակ քաղաքի և մանաւանդ Գեօրաչէնի հայերի մէջ :

«ԱՐՇԱՆՈՅ»

### Ն Ե Ր Ք Ի Ն Լ Ո Ւ Ր Ե Ր

Էջկարխը մեծ շքով Սօֆիայէն մեկնել է գէպի Ֆիլիպէ, ուր նոյնպէս մեծ ոգեւորութեամբ ընդունուած է ժողովրդին կողմէն :

—Վեչ. Բօշթա՞ կը հաղորդէ որ անցեալ օր Սօֆիայէն, հռչակաւոր Աշոտ Թորգոմ կոչուած հայ աւանթիւրիսթը, որ երբեմն «Եարժումի դէմ դատ բացած էր իբրեւ լրտես և կասկածելի մարդ ոստիկանութեան ձեռքով սահմանազուխ տարուած և Պուկարիայէն արտաքսուած է : Այդ շատ կասկածելի տիբը ուղիղ Չրւիցերիա մեկնել է . . .

### ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

#### Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Սեպտ. 29 ին Պոլսէն կը հեռագրեն թէ նախարարութիւնը այնպիսի բանաձեւ մը կը փնտռէ Մակեդոնիոյ ելեւմտից քօնթօլօլին համար, որ սուլթանի վեհապետական իրաւունքներուն չը դպչի, բայց պալատին մէջ կը շարունակեն բոլորովին հակառակ մնալ : Թուրք լուրջ շրջանակներ կը կարծեն որ վեց պետութիւնները երկար չը պիտի տոկան թուրքիոյ մերժումին և կը վախնան որ խնդիրը աւելի լայն կերպարանք ընդունի : Անդ լիւան լիակատար ինքնավարութիւն կը պահանջէ Մակեդոնիոյ և Էտիրնէի նահանգին համար : Հարց բարձրացած է նաեւ գրաւել զօրքով այն տեղերը որոնք լեզափոխական հրոսախուժերու բոյն դարձած են :

#### Ռ Ո Ւ Ս Ի Ա

Ռուս ազատական մամուլը կը դատափետէ անգլիացի հրապարակագիր Սթէտը զայն անւանելով ռուս ազատականներու թըշնամի :

—Արաւովարական թերթը կայսերական շնորհակալութիւնը կը յայտնէ հաշտութեան գործին մասնակցող բոլոր պաշտօնեաներուն :

—Կառավարական ուրազով մը մեծ զիջողութիւններ կը լլայ մին լանտիոյ վարչութեանց և գատարաններու մէջ ֆին լեզուն կործածելու համար : Նոյն ուրազով և ֆինլանտիոյ մէջ ապրող ռուսներուն քանի մի սուանձաշնորհումները կը ջնջուի :

#### ՃԱՐՈՆԻԱ ԵՒ ԳԵՐՄԱՆԻԱ

Սեպտ. 28 ին Թորքիոյէն կը հեռագրեն որ ճարտարագիտ. գերած են գերմանական երգք շոգեհաւեր : Վախ կայ որ գերմանական կառավարութիւնը պիտի միջամտէ :

#### Ա Ջ Դ

Սիլիստրէի Ազգային երկսեւ վարժարանի համար հարկաւոր է երաժիշտ ուսուցիչ մը, որ պարտաւոր ըլլայ դասախօսել վարժարանին մէջ 10-12 ժամ, գլխաւորաբար ազգային եւ եկեղեցական երգեր հսկել եւ եկեղեցւոյ մէջ ալ դպրութիւն ընել : Ամսաթուղակը գոհացուցիչ պիտի ըլլայ :

Բանակցութեան համար դիմել ուղղակի ժողովոյս ատենապետին .

Ի զիմաց Հոգարածութեան Ատենապետ Պ. Աղամեան Գ. Կ. Տիրացուեան 46 Սեպ. 1905 (Կնիք) Սիլիստրա

—)o(—